ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք. Երևան «__08__»_____05_____2024թ №__1253-Ա_____

«ՓՄՁ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» 2024 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2323 – Ն որոշմամբ հաստատված 11-րդ կետի 1-ին ենթակետ «ա» պարբերությունը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի №658-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետը.

հ ր ա մ ա յ ում ե մ.

1.Հաստատել.

1) «ՓՄՁ սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում և կառավարում» 2024 թվականի ծրագիրը՝ համաձայն N1 հավելվածի,

2) «ՓՄՁ սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում և կառավարում» 2024 թվականի իրականացման միջոցառումների ժամանակացույցը՝ համաձայն N 2 հավելվածի,

2. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությանը՝ ապահովել սույն հրամանի տեղադրումը Նախարարության պաշտոնական կայքէջում:

3. Նախարարության Ձեռներեցության վարչության պետին՝ հրամանը հաստատվելուց հետո 30-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշմամբ սահմանված կարգով ապահովել 2024 թվականի ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման նպատակով կազմակերպության ընտրության մրցութային հանձնաժողովի ստեղծումը:

Recoverable Signature

X

Signed by: GEVORG PAPOYAN 2102870448

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2024 թվականի ապրիլի « »
-Ա հրամանի

2024 ԹՎԱԿԱՆԻ ՓՄՁ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԾՐԱԳԻՐ

1. ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

1. ՓՄՁ զարգացումը նպաստում է ձեռներեցության համաչափ տարածքային զարգացմանը, բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը, արտաքին շուկաներում ՀՀ-ի ներկայացվածությանը:
2. «ՓՄՁ սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում և կառավարում» 2024 թվականի ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ուղղված է ՓՄՁ ոլորտի պետական քաղաքականության իրականացմանը:

2. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

3. Ծրագրի նպատակներն են.

1) տնտեսավարողների ձեռնարկատիրական հմտությունների զարգացման և ֆինանսական միջոցների հասանելիության ապահովման միջոցով նպաստել Հայաստանի Հանրապետությունում ձեռներեցության ոլորտի ուժեղացմանը, կազմակերպությունների մրցունակության աճին, ներքին և միջազգային թիրախային շուկաներում ներկայացվածության բարձրացմանը,

2) ռիսկայնության բարձր մակարդակ ունեցող տնտեսավարողների համար ապահովել այլընտրանքային ֆինանսական միջոցների հասանելիություն,

3) ձեռնարկությունների՝ մասնավորապես ՓՄՁ-ների մրցունակության բարելավման և շուկաներին դրանց հասանելիությանն աջակցության միջոցով նպաստել տեղական ընկերությունների արտահանման ծավալների աճին, մրցունակության բարձրացմանը,

միջազգայնացման ներուժի և կարողությունների հզորացմանը, գիտատար կազմակերպությունների ստեղծմանը, ինչպես նաև ընկերություններում նորարարության խթանմանը:

4) պետություն-մասնավոր երկխոսության արդյունքում բացահայտել գործարար միջավայրի բարելավմանն ուղղված, միջգերատեսչական լուծում պահանջող հարցերը և առաջարկել լուծումներ,

5) նպաստել ՀՀ կայուն և համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը,

6) նպաստելը միջազգային համագործակցության ամրապնդմանը և շարունակական ակտիվացմանը:

3. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

4. Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է ձեռնարկատիրական հմտությունների զարգացման, հովանոցային մեխանիզմով երաշխավորությունների տրամադրման, ՓՄՁ-երի միջազգայնացման կարողությունների աճի, պետություն-մասնավոր երկխոսության միջոցով խթանել ՓՄՁ-ների մրցունակության բարձրացումը, արտաքին շուկաներին դրանց հասանելիությունը, տեղական ընկերությունների արտահանման ծավալների աճը, միջազգայնացման ներուժի և կարողությունների հզորացումը, ինչպես նաև ընկերություններում նորարարության լուծումների ապահովումը:

«ՓՄՁ սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում և կառավարում» 2024 թվականի ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ուղղված է ՓՄՁ ոլորտի պետական քաղաքականության իրականացմանը: 2024 թվականի ծրագրում ներառված է 4 միջոցառում.

1) ԵՄ Միասնական շուկայի ծրագրի (Single Market Programme) մասնակցության միջոցառում

Միջոցառման շահառուներն են հանդիսանում ՀՀ-ում գործող ՓՄՁ սուբյեկտները, որոնք պլանավորում են ավելացնել արտահանման ծավալները, բարձրացնել իրենց մրցունակությունը, խթանել ընկերություններում նորարարությունը:

Միջոցառումը կիրականացվի ՀՀ Էկոնոմիկայի նախարարության և ԵՄ Միասնական շուկայի ծրագրի մասնակցության անդամավճարի շուրջ բանակցությունների ավարտից հետո՝ օրենքով սահմանված կարգով Էկոնոմիկայի նախարարության կողմից պայմանագրի կնքումից հետո:

2) Հովանոցային մեխանիզմով երաշխավորությունների տրամադրման միջոցառում

Միջոցառման շահառուներն են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող և լիցենզավորված բանկը կամ վարկային կազմակերպությունը (այսուհետ՝ Ֆինանսական կազմակերպություն), որը ձևավորելու է վարկային պորտֆել: Ֆինանսական կազմակերպության կողմից միջոցառման շրջանակներում ձևավորված պորտֆելի մինչև 20%-ի չափով դուրս գրված վարկերի կորստի գումարը փոխհատուցվում է Էկոնոմիկայի նախարարության կողմից:

Հովանոցային մեխանիզմով երաշխավորությունների տրամադրում կիրականացվի «Սկսնակ եվ փոքր ձեռներեցներին աջակցության միջոցառումները հաստատելու վերաբերյալ» ՀՀ կառավարության որոշման հաստատմամբ և Ֆինանսական կազմակերպությունների հետ պայմանագրերի կնքումից հետո:

3) Ձեռնարկատիրական հմտությունների զարգացման միջոցառում

Միջոցառման շրջանակներում ֆինանսավորվում է ձեռնարկատիրական հմտությունների զարգացման դասընթացի շահառուների մասնակցության վճարը:
Դասընթացը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կրթական կամ խորհրդատվական ծառայություններ մատուցող իրավաբանական անձ հանդիսացող կազմակերպության միջոցով:

Միջոցառման կարգը կհաստատվի կառավարության «Սկսնակ եվ փոքր ձեռներեցներին աջակցության միջոցառումները հաստատելու վերաբերյալ» ՀՀ կառավարության որոշմամբ և սահմանված կարգով Մասնագիտական կազմակերպությունների հետ պայմանագրերի կնքումից հետո:

4) Պետություն-մասնավոր երկխոսության շրջանակներում տարեկան աշխատաժողովի կազմակերպման միջոցառում

Միջոցառման շրջանակներում կազմակերպվում է բարձր մակարդակի 1 տարեկան աշխատաժողով**:**

Միջոցառումը կազմակերպվում է Երևան քաղաքում գործող իրավաբանական անձ հանդիսացող կազմակերպությունների միջոցով:

Մրցույթի հրավերը կհրապարակվի էկոնոմիկայի նախարարի սույն հրամանը հաստատվելուց 60 օրվա ընթացքում:

4. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

6 «ՓՄՁ սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում և կառավարում» 2024 թվականի ծրագրի ֆինանսավորման հիմնական աղբյուրը Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեն է, ինչպես նաև՝ օրենքով չարգելված այլ միջոցները (մասնավոր հատվածի և այլ շահագրգիռ կողմերի համաֆինանսավորմամբ): Ֆինանսավորման բյուջեն կազմում է 1,566,684. 40. ՀՀ դրամ:

Հավելված N 2
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2024 թվականի ապրիլի « -ի»
N - Ա հրամանի

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՓՄՁ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Վերստուգելի չափանիշը	Կատարողը (համակատարողները)	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը
1	2	3	4	5	6	7
1. ԵՄ Միասնական շուկայի ծրագրի (Single Market Programme) մասնակցության միջոցառում						
1.1	ԵՄ Միասնական շուկայի ծրագրի (Single Market Programme) մասնակցության միջոցառում	ԵՄ Միասնական շուկայի ծրագրի 2024թ-ին Հայաստանի մասնակ-ցության անդամավճար	Իրականացման արդյունքում կկնքվի 2024թ. -ին ծրագրին Հայաստանի մասնակցության անդամավճար	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2024թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ
2. Հովանոցային մեխանիզմով երաշխավորությունների տրամադրման միջոցառում						
2.1	Հովանոցային մեխանիզմով երաշխավորությունների տրամադրման միջոցառում	Միջոցառման շրջանակներում կնքվում է 3 վարկային պորտֆելի բյուջետային երաշխիքի եռակողմ պայմանագիր	Միջոցառման շրջանակներում կնքվում է 3 վարկային պորտֆելի բյուջետային երաշխիքի եռակողմ պայմանագիր յուրաքանչյուրը մինչև 5 մլրդ	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2024թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե

			ՀՀ դրամ վարկային պորտֆելի շրջանակներում:			
3. Ձեռնարկատիրական հմտությունների զարգացման միջոցառում						
3.1	Ձեռնարկատիրական հմտությունների զարգացման միջոցառում	Ձեռնարկատիրական հմտությունների դասընթացի կազմակերպման համար յուրաքանչյուր մասնակցի մասնակցության վճարը	Ձեռնարկատիրական հմտությունների դասընթացի 1000 մասնակցի դասընթացի վճար	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն Մասնագիտացված կազմակերպություններ	2024թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե
4. Պետություն-մասնավոր երկխոսության շրջանակներում տարեկանաշխատաժողովի կազմակերպման միջոցառում						
4.1	Պետություն-մասնավոր երկխոսության շրջանակներում տարեկանաշխատաժողովի կազմակերպման միջոցառում	Պետություն մասնավոր երկխոսության բարձր մակարդակի ՊՄԵ աշխատաժողովի կազմակերպում	1 արտագնա բարձր մակարդակի Պետություն-մասնավոր երկխոսության տարեկան աշխատաժողովի կազմակերպում՝ կառավարության անդամների, մասնավոր հատվածի ներկայացուցիչների մասնակցությամբ:	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2024թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ